ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 370	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը		*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	26.06.1995
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	26.06.1995
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26.06.1995	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 1995 թվականի N 370

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է՝***

1. Լուծարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հիդրոօդերևութաբանության վարչության մթնոլորտային պրոցեսների վրա ակտիվ ներգործման ռազմականացված ծառայությունը և Դվինի, Եղեգնաձորի, Թալինի, Նոյեմբերյանի, Տաշիրի ու Տաուշի ռազմականացված ջոկատները:

2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հիդրոօդերևութաբանության վարչության մթնոլորտային պրոցեսների վրա ակտիվ ներգործման պետական ձեռնարկություն՝ հատուկ նշանակության պետական ձեռնարկության կարգավիճակով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հիդրոօդերևութաբանության վարչությանը՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել լուծարքային հանձնաժողով և իրականացնել մթնոլորտային պրոցեսների վրա ակտիվ ներգործման ռազմականացված ծառայության և Դվինի, Եղեգնաձորի, Թալինի, Նոյեմբերյանի, Տաշիրի ու Տաուշի ռազմականացված ջոկատների լուծարման աշխատանքները.

բ) մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել մթնոլորտային պրոցեսների վրա ակտիվ ներգործման հատուկ նշանակության պետական ձեռնարկության կանոնադրությունը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի հուլիսի 13-ի «Հատուկ նշանակության պետական ձեռնարկությունների ցանկը սահմանելու մասին» N 399 որոշմամբ սահմանված ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ բաժնով՝

«ՀՀ կառավարությանն առընթեր հիդրոօդերևութաբանության վարչություն»:

Մթնոլորտային պրոցեսների վրա ակտիվ ներգործման պետական ձեռնարկություն»:

5. Ուժը կորցրած ճանաչել՝

ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1966 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայկական ՍՍՀ-ում հակակարկտային աշխատանքների ընդարձակման մասին» N 432 որոշման 1-ին և 5-րդ կետերը.

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1976 թվականի հունվարի 19-ի N 27գ որոշումը.

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1982 թվականի հունվարի 18-ի «ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1981 թվականի հոկտեմբերի 1-ի «Ժողովրդական տնտեսության համար 1981-1985 թթ. հիդրոօդերևութաբանական պրոցեսների վրա ակտիվ ներգործման աշխատանքների հետագա զարգացման մասին» N 985 որոշումը» N 26 որոշումը.

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1985 թվականի N 705գ որոշումը.

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1991 թվականի մարտի 11-ի «Հանրապետության մի շարք շրջաններում հակակարկտային ռազմականացված ջոկատներ ստեղծելու մասին» N 201 որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ